Գիվնար, Լազուգետ *եւ* Ամզիտ, *որոնք համանուն գեղերը, ախոռները, մացրանները, եայլաները, բերդերն ու վանքերը ոռոգելով՝ կենդանացնում են դաշտերը: Այս բոլոր առուակները իջնում են Խախամ (Խարխամ), Մեղրբել, Բեջիգին եւ Հարկեւոր լեռներից, բոլորն էլ հարաւից–հիւսիս ուղղուած:*

Կիսկիմի շրջանում Ճորոխի երկու ափերի լեռներն էլ անտառապատ են, ունին խիտ եւ բարձր ծառեր–գերաններ: Այս հովտում նշանաւոր են Կուդրաշէնի, Նիխախի, Օշնակի, Կիսկիմի, Կալա–Բոյնու (բերդի կերման ճանապարհը) Հարշիշի, Անիի[1] *եւ Գորջէքի բերդերը, որոնք կործանուած են ու աւերակ, բայց դրանց կիսաւեր եւ բարձր որմերը, պարիսպերը, դղեակների եւ ապարանքների մեծութիւնը, անառիկ դիրքերը,*

---

1 Օշնակ, Կիսկիմ բերդերի մէջ, Ճորոխի աջ ափին, Ճալայից երկու կիլոմետր արեւմտահարաւ գտւում են աւերակներ, բերդի եւ տաճարների մնացորդներ, որին բնիկները ԱՆԻ-վերան են կանչում։ Աւերակները քայքայուած են, Ճորոխի ափերը ծեծկել են որմերը։ Որ Հայաստանում Անիներ շատ կան, Վանի լճի հիւս. ափերից ո՛չ շատ հեռու “Անինանցաւ„. Ուրմիա լճի հիւս ափում “Անիանբար„. Կասպից լճի արեւելեան կողմը Կուր-Արաքսի խառնուրդին մօտ “Հանի„. Երզնկայի մօտ՝ “Անի-բերդ„՝ կարող էր Ճորոխի Աւազանում էլ մի “Անի„ լինել. ինչպէս Կարս-Կարսիք եւ հայկական այլ քաղաքների անուններ։ 1895—1915 թթ. Ռուս. զինուոր. Վարչ. Կովկասի հրատարակած քարտէզների մէջ չկայ. իսկ 1870—1872 թթ. քարտէզներում կայ այս Անիի անունը։ Անիի անունը նոյնպէս յիշեցնում է Ակկատեան Դուրիլ ու քաղաքի Անու (երկնից) դից անունով նուիրական տաճարը։